



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<26>> ասպրի լ/ս 2024թ.

N ՄՈ/ 193 -Ա

ք. Արմավիր

ՆԱԻՐԱ ԹՈՎՄԱՍՅԱՆԻՆ «ԲԵՐՔԱՇԱՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ  
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԵՎ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ  
ՀԱՄԱԿԱՐԳՈՂԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին»  
Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով և Հայաստանի  
Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի N 181-Ն որոշմամբ  
հաստատված հավելվածի 4-րդ կետով և 6-րդ կետի 1-ին ենթակետով, հիմք ընդունելով  
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության,  
մշակույթի և սպորտի վարչության պետի 2024 թվականի ապրիլի 25-ի գեկուցագիրը և Նաիրա  
Թովմասյանի 2024 թվականի ապրիլի 26-ի համաձայնությունը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. «Բերքաշատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի և վարչատնտեսական մասի համակարգողի պարտականությունները կատարող նշանակել «Բերքաշատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Նաիրա Թովմասյանին:
2. Նաիրա Թովմասյանի աշխատավարձի վճարումն իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:



2024-04-26 15:26:56 GMT+4  
Հավաստված է էԿԵՆԳ-ի կողմից

ՄԱՐԶՊԵՏ՝

Գ. ԽՈՒՂԱԹՅԱՆ